ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ.Ադամյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի ՆԶՊ /5 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առաձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար 3X4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

-ինքնակենսագրություն /Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև. ապրիլի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 26-ին ՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ.Ադամյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն ՝ գյուղ Լանջաղբյուր Խ.Աբովյան 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 91 54 04 հեռախոսահամարով: